ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- նոյեմբերի 2021 թվականի №---Ա
ք.Երևան

«ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ №0226 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՀԱՅՏԸ ՄԵՐԺԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի №309Ա ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի №498Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի նոյեմբերի 24-ին հայտով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով մինչև 2035 թվականի նոյեմբերի 30-ը երկարաձգել Հանձնաժողովի 2006 թվականի նոյեմբերի 30-ի №309Ա որոշմամբ «Լեռ էքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի №718Ա որոշմամբ Ընկերության անվամբ վերաձևակերպված՝ «Լեռ էքս ՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0226 լիցենզիայի (այսուհետ՝ №0226 լիցենզիա) գործողության ժամկետը, որն ավարտվում է 2021 թվականի նոյեմբերի 30-ին: Ընկերությունը հայտնել է նաև, որ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հետ ջրատարի համատեղ օգտագործման պայմանագիրը գտնվում է մշակման և փոփոխման փուլում, և կնքվելուց հետո սեղմ ժամկետում այն և ջրօգտագործման թույլտվությունը կներկայացվեն,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 76-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետի երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և

ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտ է ներկայացնում Հանձնաժողով, մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտից 4 աշխատանքային օր առաջ,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի նոյեմբերի 24-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 76-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի նոյեմբերի 26-ի №21/11-024 գրությամբ կրկին հայտնել է, որ №0226 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու հայտի ուշ ներկայացնելու պատճառը «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ջրատարի համատեղ օգտագործման պայմանագրի փոփոխման և կնքման գործընթացի ձգձգումն է, որը ներկայումս գտնվում է փոփոխման և լրամշակման փուլում, ինչպես նաև նշել է, որ ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով 2019 թվականի մարտի 14-ին №19/03-008 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն, սակայն նշված պայմանագրի բացակայության պատճառով թույլտվություն չի տրամադրվել ,

ե) Կարգի 77-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված արտադրության ժամանակահատվածի երկարաձգման հայտը պետք է պարունակի նաև ջրօգտագործման թույլտվություն, իսկ խմելու ջրատարների կամ ոռոգման համակարգերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանների դեպքում՝ նաև այլ անձի (անձանց) պատկանող հիդրոկառույցը օգտագործելու (հիդրոկառույցից օգտվելու) վերաբերյալ պայմանագիր կամ հիդրոկառույցին միացման թույլտվություն,

զ) Կարգի 79-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման հայտը մերժում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են կամ չեն համապատասխանում օրենքների, նույն կարգի կամ այլ իրավական ակտերի պահանջներին,

է) «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու դեպքում, նույն մասի վերջին պարբերության համաձայն՝ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով,

ը) «Լեռ էքս ՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0226 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Ընկերության 2021 թվականի նոյեմբերի 24-ի հայտի ուսումնասիրության արդյունքում

փաստվել է, որ ներկայացրած փաստաթղթերը թերի են և չեն համապատասխանում գործող իրավակարգավորումների պահանջներին: Մասնավորապես՝ չի ներկայացվել Կարգով պահանջվող ջրօգտագործման թույլտվությունը և այլ անձի (անձանց) պատկանող հիդրոկառույցը օգտագործելու (հիդրոկառույցից օգտվելու) վերաբերյալ պայմանագիր կամ հիդրոկառույցին միացման թույլտվություն: Հաշվի առնելով, որ №0226 լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է 2021 թվականի նոյեմբերի 30-ին, և այն առանց պահանջվող փաստաթղթերի երկարաձգվել չի կարող, ուստի «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը ենթակա է դադարեցման: Միաժամանակ նկատի ունենալով, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից Ընկերությունը չի համարվելու Հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձ, իրավիճակի փոփոխությամբ պայմանավորված՝ Ընկերության նկատմամբ 2021 թվականի դեկտեմբերի 1-ից Կարգի 76-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման, և

հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետը, 12-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 37-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը, Կարգի 79-րդ կետի 1-ին ենթակետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2021 թվականի նոյեմբերի 24-ին Հանձնաժողով ներկայացված №0226 լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտը:
2. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի՝

1) 2006 թվականի նոյեմբերի 30-ի «ԼԵՌ ԷՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Լեռ Էքս ՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №309Ա որոշումը,
2) 2017 թվականի նոյեմբերի 15-ի «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Լեռ Էքս ՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 9-ի №81Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №498Ա որոշումը:

3. Կարճել Հանձնաժողովի կողմից 2021 թվականի նոյեմբերի 24-ից Ընկերության նկատմամբ Կարգի 76-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:
4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ «Լեռ Էքս ՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրայանում էլեկտրական էներգիայի արտադրության (հզորության) նոր լիցենզիա ստանալու դեպքում «Էներգետիկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված՝ փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի ժամկետ չի հաշվարկվի:
5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- նոյեմբերի 2021թ.